

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2024

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ՕԼԻՄՊԻԱԴԱ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

ԹԵՍՏ

ՄԱՐԶ -----

ՔԱՂԱՔ/ԳՅՈՒՂ -----

ԴՊՐՈՑ -----

ԴԱՍԱՐԱՆ -----

ԱԶԳԱՆՈՒՆ -----

ԱՆՈՒՆ -----

ՀԱՅՐԱՆՈՒՆ -----

ՀԵՌԱԽՈՍ -----

ԷԼՓՈՍ -----

*Միրելի՛ աշակերտ, թեստը բաղկացած է 40 հարցից: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 0,5 միավոր: Պատասխանները ուշադիր ը լրացրու վերջին էջում, որը և ենթակա է ստուգման:*

*Մաղթում ենք հաջողություն:*

**1** Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *պ*:

- 1) թ-րտալ, կա-կափել, պա-ակ, անթացու-
- 2) ոսկեծո-, հապճե-, ս-րդել, հա-շտակել
- 3) հա-շտապ, երկնահու-, խո-ան, գի-ս
- 4) կա-կպել, ոսկեծու-, ա-շահար, կ-չել

**2** Ո՞ր շարքի բառերից ոչ մեկում կրկնակ բաղաձայն *չկա*:

- 1) ծաղկափ-իթ, ու-եգրություն, ըն-արմանալ, կեղ-ամ
- 2) հո-անդական, ու-արկել, անդո-ագիր, տա-ընթերցում
- 3) հո-երգություն, տա-երք, նորե-ուկ, հո-անի
- 4) խորագ-ին, քանիե-որդ, ըն-իմադիր, ամպհո-անի

**3** Ո՞ր հատվածում դարձվածք *չկա*:

- |   |  |
|---|--|
| 1) Երազեցի շարունակ<br>Իմ կյանքի մեջ ես մանկուց<br>Ու մնացի միշտ մենակ<br>Պատրանքի մեջ ես մանկուց:  | 3) Վերքիս ցավից լաց եմ լինում,<br>Դու ինձանից նեղանում ես,<br>Նեղանալը՝ քարը գլխին,<br>Սկսում ես նեղացնել: |
| 2) Խորքերում գանձ ունեն քարափները,<br>Թիկունքներին ունեն անտառ ու հերկ...<br>Միայն մի բան չունեն քարափները,<br>Քարափները չունեն կարապի երգ: | 4) Եվ արժե՞ր արդյոք, որ աշխարհ<br>գայիր<br>Մի տուն, մի գլուխ պահելու<br>համար:                             |

**4** Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) մի(երկու), թեթև(քաշային), դիցուք(թե), երկու(երրորդ)
- 2) կողք(կողքի), հինգ(հարկանի), լույս(ընծայել), ի(դերև)ելնել
- 3) ի(հեճուկս), առ(այն), սրբություն(սրբոց), դեմ(հանդիման)
- 4) ըստ(իս), ձեռք(բերում), թև(առնել), հենց(որ)

**5** Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն մեկ բաղադրիչն է գրվում մեծատառով:

- 1) ՇԻՐԱԿԻ ԼԵՌՆԱՇՐՋԹԱ, ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՍԱՐԱՆ, ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
- 2) ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆ, ՆՈՅԻ ՏԱՊԱՆ, ՍԱՆՆԻԿՈՎԻ ՆԵՂՈՒՑ
- 3) ՊԱՆԱՍԱՅԻ ԶՐԱՆՅՔ, ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ, ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ
- 4) ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ, ՍԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՍԱՍԱՆՅԱՆ ՏՈՀՄ

**6** Ո՞ր շարքի բոլոր բառերում *երկինջյունի* հնչյունափոխություն կա:

- 1) քրիստոնեություն, եղջերավոր, կուտակել, ատենակալ
- 2) ուխտադրժորեն, անգոլաբար, բուսաբանական, արմանման
- 3) կառուցապատում, ձկնաբուծարան, անթույլատրելի, կապտականաչ
- 4) բուրաստան, գուժկան, գուշակություն, դաշունահարել

**7** Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) կողով-քթոց, կնգուղ-վեղար, բարակ-քերծե, գիշեր-ցայգ
- 2) անգարդ-անպաճույճ, տիվ-ցերեկ, հակոտնյա-հակամետ, մառան-նկուղ
- 3) կողակից-ամուսին, դժնի-անողորմ, գողտրիկ-թաքուն, ներհուն-լայնախոհ
- 4) աղորիք-երկանք, հորդ-առատահոս, խոնջանալ-սեթևեթել, գեհեն-դժոխք

**8** Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) *եքամ* - թռչունների խումբ, *քիվ* - ժայռի խոռոչ
- 2) *կենվոր* - վարձով ապրող, *ժուժկալ* - ինքն իրեն գսպող
- 3) *աղյուս* - կավից պատրաստված շինանյութ, *կտավատ* - վուշի սերմը
- 4) *կռթնել* - արմունկով հենվել, *այրի* - ամուսինը մահացած կին

**9** Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Հորեղբայրս հայտնի որսորդ է, սակայն վերջերս խիստ զբաղված լինելու պատճառով արդեն ստեպ-ստեպ է գնում որսի:
- 2) Կատակերգության երկրորդ տեսիլը ամենահաջողվածն էր և գերեց բոլորին:
- 3) Ուսուցչուհին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած աշակերտներին:
- 4) Ասպնջական ընտանիքում միշտ էլ հաճելի է հյուրընկալվելը:

**10** Տրված բառերից քանիսի՞ օ՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *ունք* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

*պարսպություն, ծաղկավաճառ, բուրավետ, մասնագետ, կնամեծար, գարնանացան, զգայարան, մանրավաճառ, բարձրատոհմիկ*

- 1) երկուսի
- 2) երեքի
- 3) չորսի
- 4) հինգի

**11** Ծարքերից քանիսի՞ ոչ բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:

- մանուկ, ծագում, սառցալեռ, անուն
- քաղաքադուռ, դիմում, աշուն, երդում
- հեռագրասյուն, գարուն, երդում, ուղեբեռ
- ամառ, գառ, շնաձուկ, նորոգում

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

**12** Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում –*մեր* վերջավորությամբ:

*գարեջուր, ամրաստանագիր, հանքահոր, առակագիր, լրագիր, մանկագիր, խորագիր, գիսաստղ, հորաքույր, տոնածառ, ակնաբույժ, ոտնաձայն*

- 1) երեքի
- 2) չորսի
- 3) հինգի
- 4) վեցի

**13** Հատվածներից քանիսում դիմորոշ հողի գործածությունն կա:

- Մենք մեզ սամումից խլել ենք, Թափվել ու թռչնել ենք, սակայն Ինքներս մեր միջից ծլել ենք:
- Բայց ես այս աշխարհում Բախտավոր եմ, քանզի Բռնակալն եմ խոսքիս, Խղճիս՝ թիապարտը:
- Ի՞նչ երջանիկ պահեր էին. Ոտքերիս տակ սարեր էին:
  - Եվ այս ասում եք ո՛չ Դուք, ո՛չ Նրանք, այս ես եմ ասում, Ես՝ Սիս-Մասիսս, անդուլ-անդադար-անվերջ զնգացող իմ անբուն զանգով:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**14** Բայերից քանի՞սն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):

*մոլեզունել, ցատկոտել, մոտենալ, հեռացնել, բղավել, գովաբանել, մեկնել, մտնել, կպչել, մեղանչել*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

**15** Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) հոգնում էր, չէր տեսնի, գնալու եմ, թռավ
- 2) գնացիր, չսովորեիր, գտել է, չի խոսում
- 3) գիտեմ, չեմ գնալու, խոսեցրիք, մտանք
- 4) եկան, ելնենք, հասնում էր, փախել էին

**16** Ո՞ր հատվածում անկանոն բայ *չկա*:

- 1) Երբ կհոգնես, կգազազես աշխարհից, Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից:
- 2) Ինձ թաղե՛ք, երբ տխուր մթնշաղն է իջնում, Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ:
- 3) Ե՛վ ես արթնացա խնդության ցավից. Գիշերվա հովն էր լալիս դաշտերում:
- 4) Իմ գերեզմանին դուք չմոտենաք, Թողե՛ք, որ հանգչի իմ սիրտը հոգնած:

**17** Ո՞ր հատվածներում ներգործական սեռի միայն մեկ բայ կա:

1. Մենակություն բառից դողում է օդն իմ սենյակի,  
Ու ես հասկանում եմ,  
Որ աչքերն են մարդու ամենաթաց տեղը...
2. Պարզապես շուտ եմ եկել հանդիպման.  
Միրուց չեմ զգում ո՛չ ձյուն, ո՛չ սառույց.  
Ի՞նչ մեղավոր եմ, որ ես այս անգամ  
Իմ սիրտն եմ ընտրել որպես ժամացույց:
3. Ե՛վ տանջանք, և՛ բեկում, և՛ թախիծ,  
Սև օրեր ես դեռ շատ կտեսնեմ.  
Անունդ թող փարոս լինի ինձ  
Սուտ կյանքի և դառը մահու դեմ...
4. Ավա՛ղ, մարդը լոկ իր ցավն է զգում,  
Լոկ իր ցավով է ցավում ամեն ցեղ,  
Հասմիկի մահը վարդը չի սգում,  
Ոչ վարդի մահը՝ հասմիկն աչազեղ:

**18** Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա*:

- 1) Միայն մի ցավ էր նրան տանջում՝ որդու ամուսնությունն այլադավանի հետ:
- 2) Նա երևի մոռացել էր, որ ժամադրված է:
- 3) Մի՞թե դժվար է ճիշտ ժամին ներկայանալ աշխատավայր:
- 4) Տարիներն ամենևին չէին խաթարել նրա գեղեցկությունը:

**19** Ո՞ր շարքում են միայն պարզ ժամանակաձևեր:

- 1) մի՛ խոսիր, եկել եմ, կփորձես
- 2) պիտի նայես, աղո՞թք արա, դուրս եկավ
- 3) հավատացել էի, մի՛ հիշիր, մո՛տ արի
- 4) չի գրի, սիրեցինք, պետք է ժպտաս

**20** Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:

- 1) Արշալույսի բոսոր ճառագայթները արտացոլվել էին ծովի բեկբեկուն ալիքների մեջ:
- 2) Աղջիկը քաղաքի փողոցներում վախից և անհանգստությունից մոլորվել էր:
- 3) Արամն այդ անհաջողությունից չէր վիատվել. գիտեր, որ դեռ հույս կա:
- 4) Քաղցից ու թշնամուց հալածված գաղթականները վերջապես անցան Արաքսը:

**21** Ո՞ր շարքի բոլոր բառերն են համապատասխանում նշված տեսակին:

- 1) հոգաբարձու, ամենայն, համենայն դեպս – *նյութական*

- 2) արդյոք, բազմիցս, մյուս – *նյութական*
- 3) միջև, հանձին, ի փառս – *քերականական*
- 4) առթիվ, գուցե, նպատակով – *քերականական*

**22** Ո՞ր շարքի բոլոր բառերն են ստորադասական շաղկապներ:

- 1) եթե, որտեղ, թեպետ, որպեսզի
- 2) մինչ, քանի որ, չնայած, քանի դեռ
- 3) որովհետև, թեև, ուր, նախքան
- 4) թեկուզ, հենց որ, ինչ, քանզի

**23** Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իդճերը:
- 2) Փոքր գրողները հավերժական հանճարների լուծը կրողն են:
- 3) Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը բարձր պահեր ազգային արժանապատվությունը:
- 4) Իմ գործընկեր Սուրենն էր հեղինակել այդ կարևոր գործը:

**24** Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:

- *Բենադրվեց նաև Շեքսպիրի վերջին գործը՝ «Փոթորիկը», որ մեծ թատերագրի թողած մարգարեական ժառանգությունն էր նոր ժամանակներին:*  
Բենադրվեց նաև Շեքսպիրի վերջին գործը՝ «Փոթորիկը»՝ մեծ թատերագրի՝ նոր ժամանակներին թողած մարգարեական ժառանգությունը:
- *«Մակբեթի» մեջ Շեքսպիրը հանգում է այն գաղափարին, որ մարդու մեջ անհաղթահարելի է փառամոլության ձգտումը:*  
«Մակբեթի» մեջ Շեքսպիրը հանգում է մարդու մեջ փառամոլության ձգտման անհաղթահարելի լինելու գաղափարին:
- *Կամքի թուլությունից չէ, որ Համլետը չի իրագործում իրեն պարտադրված անդրշիրիմյան հրամանը:*  
Համլետի՝ իրեն պարտադրված անդրշիրիմյան հրամանը չիրագործելը կամքի թուլությունից չէ:
- *Շատ սիրող հայրը փչացնում է որդուն այնպես, ինչպես շատ վարար առվակը քշում-տանում է նորաբույս տունկը:*  
Շատ սիրող հայրը փչացնում է որդուն շատ վարար առվակի՝ նորաբույս տունկը քշել-տանելու պես:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**25** Բարդ ստորադասական նախադասություններից քանիսի՞ երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

- Փքուն, գեղեցիկ բառերի սիրահար հեղինակն ինձ հիշեցնում է գավառացի հարուստ կնոջ, որ գեղեցկության համար բոլոր մատները զարդարում է մատանիներով: *(որոշիչ)*
- Անդրանիկ Ծառուկյանին շատ լավ հայտնի էր, որ թշնամի բանակների բաժանված հայերն իրար հոշոտում են հանուն իրենց շահերի: *(ենթակա)*
- Տխուր հուշերի հորձանքը վանելու համար Թումանյանը խոսք բացեց այն հերոսական կռիվների մասին, որ մի ժամանակ վարել էր Լոռու գյուղացիությունը պարսիկների ու լեզգիների դեմ: *(վերաբերության անուղղակի խնդիր)*
- Այն օրերին, երբ Թիֆլիսի բոլոր հայ տղամարդկանց լցրին բանտերն ու արքայազնին, ձերբակալվածների հարազատները հանգիստ չէին տալիս Թումանյանին: *(ժամանակի պարագա)*

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

**26** Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ չկա:

1. Տեսնելով Վասակին անձով փոքր` (սպարապետը միջահասակից ցածր, փոքրամարմին տղամարդ էր) Շապուհը` այդ գոռոզ ու նենգամիտ բռնակալը, արհամարհանքով զննեց նրան:
2. Կնոջ դեմքի` գայրույթից ձգված մկանները լարված էին, ձայնը ելևէջում էր` ամեն պահ սպառնալով խզվել:
3. Գուսանը մեղմիկ զարկում էր լարին, և հեծկլտում էր լարը և լաց լինելով պատմում սիրո մի տխուր պատմություն:
4. Անցած-գնացած օրերի մասին գրուցելիս` նախկին զինվորականը պատմեց Հայրենական պատերազմի դրվագներից և հիշելով իր զոհված ընկերներին` խիստ հուզվեց:
5. Դահլիճում հնչում էր խրոխտ երաժշտություն` բոլորին ոգևորող հայրենասիրական երաժշտություն:



**27** Քանի՞ բույս պիտի դրվի տրված հատվածում:

Տասներեքերորդ դարում օրըստօրե ծաղկող Անի քաղաքում հարուստ ու ինքնագոհ մի իշխան էր ապրում Անանիա անունով: Նա ուներ մի քնքուշ դուստր դեղձան ծամերով ականակիտ ծավի աչքերով: Գեղանի աղջիկը ցանկանալով գրավել բոլորի ուշադրությունը հաճախ ճեմում էր հոր ապարանքի քարե պատշգամբում: Իր գեղեցկությամբ ու հմայքով ազնվագարն նազանքով նա հմայում էր անցորդներին և ամենքը ամեն ինչ մոռացած նայում էին նրան:

**28** Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

*Միակ ուղևորը, որ լռելյայն նստած էր լաստանավի աջ եզրին, մի ձեռքով խաղում էր նավակողի հետ, մյուսով` ջրի ալիքների հետ և ասես շոյում էր չարանճի ալիքները, որոնք հրում էին իրար ու մի վայրկյանում անհետանում:*





**29** Ո՞ր տարբերակում հատկացուցիչ չկա:

- 1) Մենավոր սիրտ, մոլորված թռչուն, Կարոտիդ կանչը չի հասնի նրան:
- 2) Կոռնանամ հեռվի աղմուկը ահեղ, Կզգամ համբույրը ուրիշ օրերի:
- 3) Երեխի նման խաբեցին ինձ շատ, Ամեն հաճույքիս նայեցին միշտ խեթ:
- 4) Պուրակները չորացել են, չքացել, Եվ շիջել է լույս երազը սյուների:

**30** Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:

- 1) Մնացողները կծիկ են դառնում Թրջվելու վախից: (*բայ*)
- 2) Տխրությունս անուշ է որպես Հեռավոր, հեռավոր կարկաչուն: (*ածական*)
- 3) Ի՞նչ է մնում գնացողին, Ի՞նչ է մնում ինձ անելու: (*դերանուն*)
- 4) Բացվող օրվա հետ վեր թռան հանկարծ Լույսի խտուտից զարթնած սարերը: (*գոյական*)

**31** Ո՞ր տարբերակում է ուղղակի խոսքը ճիշտ փոխակերպված:

- 1) *Հասնելով հարևանի տան աստիճաններին՝ ծերունին, ծանր շնչելով, ինքնիրեն խոսում էր.*  
 - *Ես սրա նմանի դուռն եմ եկել, տե՛ր աստված, ի՛նչ օրի եմ հասել:*  
 Հասնելով հարևանի տան աստիճաններին՝ ծերունին, տե՛ր աստծուն դիմելով, խոսում էր՝ ծանր շնչելով, որ ինքը սրա նմանի դուռն է եկել, ի՛նչ օրի է հասել:
- 2) *«Հորս սխալների համար ե՞ս եմ պատասխան տալու, - հուսահատ հարցնում էր Վահանը ինքն իրեն, - և ինչո՞ւ են բոլորն ինձնից քայլեր սպասում»:*  
 Վահանը ինքն իրեն հուսահատ հարցնում էր, թե հոր սխալների համար արդյոք ինքն է պատասխան տալու, և ինչու են բոլորը իրենից քայլեր սպասում:
- 3) *- Վերցրո՛ւ որբին, - ասաց ինձ քուրդը՝ լսելով Միսակի երգը, հետո կմկմաց, - քո կես ոսկին հարկավոր չէ. նրա երգը ոսկուց էլ գորավոր էր:*  
 Քուրդը, լսելով Միսակի երգը, ասաց ինձ, որ վերցնեմ որբին, հետո կմկմաց, որ իմ կես ոսկին հարկավոր չէ. նրա երգը ոսկուց էլ գորավոր էր:
- 4) *- Լիլիթ, նագելի՛ս, գնանք իմ տաղավարը. ամենահամեղ պտուղներից սեղան եմ պատրաստել քեզ համար, - խնդրեց Ադամը:*  
 Ադամը խնդրեց Լիլիթին, որ նա գնա իր տաղավարը. ինքը ամենահամեղ պտուղներից սեղան է պատրաստել նրա համար:

**32** Ընդգծվածներից քանի՞սն են գերադաս նախադասություն:

- Ամեն օր քնից զարթնում էր թե չէ, անդամալույծը սկսում էր գոռալ ու լաց լինել երեխայի պես:
- Լրտեսները վերադարձան և հայտնեցին, թե մնացել է միայն մի քանի քայլ տարածություն, որ ջրանցքի արգելքը բացվի:
- Թե՛ն արևը կիզում էր, և ծածկեր չկային, բայց, փույթ չէ, աշխատում էին



- պայտարները, դարբինները, դերձակները՝ բոլորն ի սպաս բանակի:
- Չեմ մոռանում այդ օրը, հաստատ գիտեմ՝ առաջին անգամ Չորագյուղ գալը դարձավ իմ կյանքի լավ օրերից մեկը:

**33** Ո՞ր նախադասության դիմաց է նրա տեսակը սխալ նշված:

- 1) Չորսրդուրը կանաչագարդություն, բույրեր, կարկաչուն գետակի խոխոջյուն, թռչունների զվարթ ճովողյուն: (*անդեմ անվանական*)
- 2) Եթե ավագ քույրը առանձնապես չէր փայլում իր արտաքնով, ապա կրտսերը մի առիթնուղ գեղեցկուհի էր: (*բարդ ստորադասական*)
- 3) Գետակի կա՞նչն է արձագանք տալիս, թե՞ մանկությունս է ձորերում լալիս: (*բարդ համադասական*)
- 4) Անցորդները, որքան էլ զարմանալի է, ոչ մի ուշադրություն չէին դարձնում համընդհանուր աղտեղությանը: (*պարզ ընդարձակ*)

**34** Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:

*Աստղիկը՝ հեթանոս հայերի պաշտելի դիցուհին, անմիջապես նկատում է հիպոնոսացած կտրիճներին և նրանց հանդուգն ու սիրատարփի հայացքներից պաշտպանվելու համար դաշտը պատում անթափանց մշուշով, որից էլ ծնվում է դաշտավայրի Մուշ անունը:*

1. **կտրիճներին**- ուղիղ խնդիր
2. **անունը**- ենթակա
3. **հայացքներից**- ներգործող խնդիր
4. **դիցուհին**- ենթակա
5. **անմիջապես**- ժամանակի պարագա
6. **մշուշով**- ձևի պարագա
7. **նկատում է**- պարզ ստորոգյալ
8. **սիրատարփ**- որոշիչ

**35** Տրված պնդումներից որո՞նք են սխալ:

1. Որոշիչ ստորադաս նախադասությունը լրացնում է գերադասի՝ գոյականով կամ անձնական դերանունով արտահայտված անդամին:
2. Հանգման անուղղակի խնդիր ստորադաս նախադասություն կարող է ունենալ միայն այն գերադաս նախադասությունը, որում չեզոք սեռի բայ կա:
3. Միևնույն գերադասին լրացնող և նույն բնույթն ունեցող ստորադաս նախադասությունները միշտ միմյանց համադաս են:
4. Բոլոր բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպվում են պարզի:
5. Բարդ նախադասության ստորադաս բաղադրիչի կազմում գտնվող **որ, երբ, ինչպես, ուր** բառերը չեն կարող լինել հարցական դերանուն:
6. Բարդ նախադասության կազմում կարող է միակազմ բաղադրիչ նախադասություն լինել:

**36** Հ. Պարոնյանի նշված ստեղծագործություններից որի՞ ժանրային պատկանելությունն է սխալ նշված:

- 1) «Մեծապատիվ մուրացկաններ» (կատակերգություն)
- 2) «Ազգային ջոջեր» (դիմանկարների շարք)

- 3) «Քաղաքավարության վնասները» (նովելների շարք)
- 4) «Պտույտ մը Պոլտո թաղերու մեջ» (ակնարկների շարք)

**37** Ըստ «Մասնա ծոեր» էպոսի համահավաք բնագրի՝ ի՞նչ պայման են կապում Մեծ Միերը և Մըսրա Մելիքը:

- 1) Ով հաղթի մենամարտում, նա դառնա և՛ Մասունի, և՛ Մըսրա թագավոր:
- 2) Ով շուտ մեռնի, նրա ընտանիքին տիրություն անի մյուսը:
- 3) Ով կարողանա հաղթել Սպիտակ Դ-Լին, մյուսը նրան հարկ վճարի:
- 4) Ում տերությանը վտանգ սպառնա, մյուսը նրան զորքով օգնության հասնի:

**38** Տրվածներից քանիսի՞ հեղինակն է Պ. Սևակը:

«Կուզեի նստել մի քարի վրա», «Մի՞թե վերջին պոետն եմ ես...», «Մարդը ավի մեջ», «Մարդ էլ կա, մարդ էլ», «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին», «Խոսք իմ որդուն», «Վարք մեծաց», «Դեպի լյառը Մասիս», «Անլռելի զանգակատուն»:

**39** Նշվածներից ո՞րը պոետն չէ:

- 1) «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» (Պ. Սևակ)
- 2) «Հարճը» (Դ. Վարուժան)
- 3) «Բիրլիական» (Հ. Շիրազ)
- 4) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ավ. Իսահակյան)

**40** Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի սկզբում հեղինակն ասում է, որ մայր ձին բնագործ վտանգ էր զգացել այն ժամանակ, երբ դեռ թշնամու՝ գայլի ո՛չ հոտն էր զգացվում հովտում, ո՛չ ձայնն էր լսվում:
- 2) Հ. Շիրազը իր «Թագադրում» բանաստեղծության մեջ ներկայացնում է բնության հզոր ուժերի առջև թույլ մարդու անզորությունը:
- 3) Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը պատկերում է արտոբյալների տառապանքը Սիրիիում:
- 4) Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպում կան չափաձո հատվածներ:

Օլիմպիադայի 1-ին փուլի թեստի պատասխաններ

- 1- 3
- 2- 1
- 3- 1
- 4- 3
- 5- 2
- 6- 1
- 7- 1
- 8- 1
- 9- 1
- 10- 2
- 11- 3
- 12- 1
- 13- 2
- 14- 2
- 15- 3
- 16- 2
- 17- 13
- 18- 4
- 19- 2
- 20- 4
- 21- 3
- 22- 2
- 23- 2
- 24- 4
- 25- 2
- 26- 23
- 27- 2
- 28- 1
- 29- 3
- 30- 2
- 31- 3
- 32- 1
- 33- 2
- 34- 346
- 35- 12345
- 36- 1
- 37- 2
- 38- 5
- 39- 4
- 40- 2